ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 927 - Ա

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշումը՝

1. Հայաստանի Հանրապետության շահերը ներկայացնող միջազգային իրավախորհրդատու «Foley Hoag» իրավաբանական ընկերության ներկայացուցիչ-ների հետ ընթացիկ մի շարք արբիտրաժային և դատական վարույթներով առաջիկա գործողությունների շրջանակը և ռազմավարությունը քննարկելու նպատակով՝ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Կարեն Անդրեասյանին 2026 թվականի սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 3-ը ներառյալ գործուղել Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն՝ սեպտեմբերի 26-28-ը, Նյու Յորք՝ սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 2-ը):

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին՝ սահ-մանված կարգով ապահովել Կարեն Անդրեասյանի գործուղման հետ կապված ծախսերի հատուցումը (օրապահիկը և գիշերավարձը՝ սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 2-ը ընկած ժամանակահատվածի համար):

3. Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչին՝ գործուղումից վերադառնալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

18.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ